



Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում
Մեթոդական ուղեցույց Էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով



ՄԱՐԴԿԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Ռաֆայել Մխիթարյան

Մեթոդական ուղեցույց Էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի
օրինակով

Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի
Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղ

ԳՅՈՒՄԴԻ, 2018



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
	Ձեր շահառուներին և շահագրգիռ կողմերին ներգրավելը.....	4
	Ուղեցույցը և գործիքները. հիմնական տեղեկատվությունից մինչև քայլ առ քայլ հրահանգներ.....	5
	Ուղեցույցը ունի հետևյալ կառուցվածքը.....	6
2.	ՄԱՐԴԿԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ.....	6
	Աշխատանք համայնքի շրջանակներում.....	6
	«Insero Live Lab» նախագիծը՝ մարդկանց ներգրավելը պատմությունների միջոցով.....	6
	Միայն փողով մասնակցություն չի ապահովվի.....	7
	Դրամային և ոչ դրամային խթանների ընտրությունը և համադրումը/միավորումը.....	8
	«InovGrid» նախագիծը՝ կայուն էներգետիկ վարքագծի խթանումը խաղերի և զվարճանքի միջոցով.....	8
3.	Մեթոդական աջակցություն.....	9
	Ինչպե՞ս աջակցել համայնքին քաղաքացիական ակտիվության բարձրացման և ներգրավման համար.....	9
	Ինչի՞ համար է ուղեցույցը.....	10
	Ե՞րբ կիրառել.....	10
	Տեղի/բնակավայրի գիտակցման, թե՞ շահերի գիտակցման վրա հիմնված համայնք/ համակեցություն.....	11
	Համայնքային/տեղի ուժեղ զգացողության օգտագործման օրինակ (Texel Cloud Power, NL). ինչպիսի համագործակցություն էներգետիկայի ոլորտում.....	11
	Համայնքի մասնակցությունը ըստ գործընթացի կամ արդյունքի.....	12
	Ինչ անել և ինչ չանել.....	13
	Ի՞նչ է պետք անել պլանավորման փուլում.....	13
	Տեղական համայնքներին ներգրավելը՝ ծրագրին սոցիալական աջակցություն ապահովելու համար, շահառու համայնքի ներգրավման օրինակ (PREMIO, FR)....	14
	Ի՞նչ է պետք անել մասնակիցների հավաքագրման փուլում.....	14
	Շրջակայքում աղմուկ ստեղծելը, օրինակ.....	15
	Ի՞նչ է պետք անել իրականացման փուլում.....	16
4.	ԴՐԱՄԱՅԻՆ ՏԱՐԱՏԵՍԱԿ ԽԹԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ.....	17



Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում
Մեթոդական ուղեցույց էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով

Սովորական դրամական պարզևատրումը (կանխիկ պարզևատրում).....	17
Սպառողների օգտագործած էլեկտրաէներգիայի հաշիվների վրա զեղչերի կիրառումը.....	17
Ֆինանսական օգուտներ մասնակցությունից և «խելացի-ցանցային» տեխնոլոգիաներից, առանց զեղչերի տրամադրման կամ այլ դրամական խթանների.....	18
Դրամային խթանով մասնակիցների ներգրավմամբ համայնքային էներգետիկ ծրագրի օրինակ.....	20
5. ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ.....	21
«Ժամանակի օգտագործման» ծրագրեր.....	22
Ճշգրիտ չափումը.....	22
Այլ ֆինանսական խթաններ.....	23
6. ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	24
7. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	26



ՄԱՐԴԿԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Մեթոդական ուղեցույց էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքներում իրականացվող զարգացման ծրագրերի շահառուների հետ փոխգործակցության հասկացությունը հանդիսանում է իրական հիմնախնդիր:

Մարդկային վարքի վրա ազդեցություն ունեն միանգամից մի քանի տարբեր գործոններ, և առանձին գործոնների ազդեցությունը դժվար է մեկուսացնել: Միավորելով տեսությունը և փորձնական ծրագրերի արդյունքների վերաբերյալ փորձարարական հետազոտությունները, մենք ստանում ենք շահառուների հետ փոխգործակցության լավագույն պրակտիկայի և թաքնված խոչընդոտների մասին առաջին պատկերացումները: Սակայն, իրականում այդ եզրահանգումները հանդիսանում են միայն այդ առաջին մտահղացումները կյանքի կոչելու՝ փորձնական ծրագրերի միջոցով ստացված արդյունքներ, երբ շահառուները պատրաստ էին համագործակցել, և ստացված արդյունքները կարող էր վերածվել հավաստի տեղեկատվության: Անկախ այն բանից, թե ծրագրերի ղեկավարները հանդիսանում են հասարակական կազմակերպությունների անդամներ, աշխատում են համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններում, կոմունալ տնտեսություններում կամ զարգացման գործակալություններում, հաճախ ցավալիորեն կանգնում են փաստի առաջ, երբ չեն հասնում իրենց նպատակային խմբի հետ փոխգործակցության, կամ կորցնում են այն անմիջապես, երբ նախագծի մեծ մասն արդեն մնացել է անցյալում:

Մասնավորապես էներգետիկ ոլորտում, Հայաստանում և արտերկրում, գոյացել են հոգեբանական և սոցիոլոգիական գիտելիքներ, գործնական և մեթոդական գործիքներ և ուղեցույցներ, որոնք պատրաստ են տարբեր ծրագրեր մշակողների և իրականացնողների կողմից օգտագործվելու համար: Այնուամենայնիվ, դեռևս հարց է, թե դրանք կարող են օգնել միավորելու տեխնոլոգիական և մարդկային մոտեցումները շահառուների ներգրավման և քաղաքացիական մասնակցության խթանման գործընթացում, օրինակ, ապագայի «էներգետիկ անկախ համայնք» նախաձեռնություններում:

- ***Ձեր շահառուներին և շահագրգիռ կողմերին ներգրավելը***
- *Դուք ինչպե՞ս կկարողանաք աջակցել ձեր շահառուներին և շահագրգիռ կողմերին, որպեսզի նրանք դառնան զարգացող համայնքի մասը, օրինակ, ապագայի էներգետիկ համակարգի գործուն մասնակից:*
- *Դուք ինչպե՞ս կկարողանաք շահագրգռել մտածելու և հնարավոր է հարմարեցնելու իրենց «էներգետիկ վարքը»:*



**Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում
Մեթոդական ուղեցույց էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով**

- *Ինչպիսի խթաններ են անհրաժեշտ նոր գործընթացները խրախուսելու համար:*

Այս հարցերին պատասխանելու և համայնքային զարգացման ծրագրերում, մասնավորապես համայնքի «խելացի էներգետիկայի» կամ էներգաարդյունավետության ոլորտում բոլոր մասնակիցների համար, կամ բոլոր նրանց համար, ովքեր մտադրված են շահառուների ակտիվ ներգրավման գործում մասնակցություն ունենալ, սույն ուղեցույցում ներկայացվում են մշակված և տարբեր երկրներում փորձարկված գործիքակազմ:

Առաջարկվում է երեք տարբեր գոտիներ մեթոդական գործիքներն ու առաջարկությունները ստանալու համար: Կախված նրանից, թե ինչպիսի աջակցություն էք փնտրում, դուք կարող եք ընտրել դրանց միջև:

Ուսուցում	Մշակումներ	Հետազոտություններ
Դիտարկեք սույն ուղեցույցում ներկայացվող մտքերը և առաջարկությունները համայնքային զարգացման ծրագրերում մարդկանց ներգրավելու ուղղությամբ: Իմացեք պրակտիկ մասնագետներից թե ինչու և ինչպես կարող եք օգտագործել մեր առաջարկությունները, զուգահեռաբար ընտրեք նաև ձեր սեփական թեմաները, ելնելով ուսուցման նպատակների և առանձնահատկություններից:	Շահառուների փոխգործակցությունը ծրագրի արդյունքների հետ, օրինակ «խելացի էներգացանց» համակարգում իրենց գործնական մասնակցությունը, կարևոր է ծրագրի զարգացման հաջորդ փուլերի մշակման գործընթացներում: Յուրաքանչյուր փուլում պետք է ուշադրություն դարձնել տարբեր թեմաների վրա՝ տվյալ փուլի նպատակներին համապատասխան:	Այս բաժնում դուք կարող եք գտնել տեղեկություններ մարդկանց մասնակցության վերաբերյալ, որպես օրինակ տարբեր երկրներում իրականացված կոնկրետ ծրագրերի փորձից վերցված տվյալներից, ըստ սույն ուղեցույցում ներկայացվող թեմաների:

- ***Ուղեցույցը և գործիքները. հիմնական տեղեկատվությունից մինչև քայլ առ քայլ հրահանգներ***

Զարգացման ծրագրերում ներգրավվող մարդիկ պետք է զբաղվեն հետաքրքիր «ճամփորդությամբ», որը թույլ կտա նրանց սեփական քայլերի և գործողությունների միջոցով գտնել օգուտներ կամ հնարավորություններ:

Սույն ուղեցույցի առաջարկություններում ներկայացվում է ակնարկ, որը դուք պետք է դիտարկեք, և որը ցույց է տալիս այդ ճամփորդության ուղղությունները, առանց մանրամասնեցնելու յուրաքանչյուր քայլը:

Առաջարկություններում դուք կգտնեք գործնական խորհուրդներ այն մասին, թե ինչ է պետք հաշվի առնել ձեր շահառուների ներգրավման գործում, ինչպես նաև տարբեր նախագծերի և ծառայությունների պրակտիկ օրինակներում շահառուների հետ շփվելու ռազմավարություններ և ներգրավման տարբեր խթաններ:

Առաջարկվող գործիքակազմը տալիս է մանրամասն քայլ առ քայլ նկարագրություն, թե ինչպես



**Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում
Մեթոդական ուղեցույց էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով**

ներգրավել մարդկանց ձեր ծրագրերում: Դրանք հանդիսանում են օգտագործման համար պատրաստի գործիքներ, որոնք ուղղված են ձեր և ձեր շահառուների միջև փոխգործակցությունը դյուրին դարձնելուն, գործուն կապի և փոխադարձ աջակցության ստեղծմամբ:

▪ ***Ուղեցույցը ունի հետևյալ կառուցվածքը***

- Ինչ է ուղեցույցը:

Ներկայացնում է ակնարկ, թե ինչ կարող եք ակնկալել այս ուղեցույցից:

Որն է թեման և ով է թիրախային խումբը:

- Երբ օգտագործեք:

Պարզաբանում է, թե ինչ նպատակներով, ինչ իրավիճակում կամ հանգամանքներում կարող եք օգտագործել այս ուղեցույցում ներկայացված առաջարկությունները:

- Լավագույն փորձի օրինակ:

Ձեր նախագիծը կարող է նման լինել տարբեր երկրներում իրականացված ծրագրերին: Ներկայացնում է, հատկապես էներգաարդյունավետության ոլորտում աշխարհի լավագույն նախագծերից առանցքային թեմաների կիրառման լավագույն փորձի օրինակներ, ինչպես նաև այլ օրինակներ:

- Ինչ պետք է անեք:

Ներկայացնում է քայլ առ քայլ տեղեկություններ նախաձեռնության իրականացման համար:

- Ինչ անել և ինչ չանել:

Գործնական ուղեցույցներ են, որոնք կօգնեն ձեզ օգտագործել հաջողության բացահայտված գործոնները և խուսափել թաքնված խոչընդոտներից:

2. ՄԱՐԴԿԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐՈՒՄ

▪ ***Աշխատանք համայնքի շրջանակներում***

Իրազեկության բարձրացումը և մարդկանց ներգրավումը զարգացման ծրագրերում, օրինակ, «համայնքային խելացի էներգետիկ ցանցերի» նախագծերում, հասարակության համար մարտահրավեր է: Այս խնդրի լուծման ամենաակտիվ ուղիներից մեկը «համայնքի դինամիկան» օգտագործելն է և մարդկանց հոգեբանությունում առկա «տեղի զգացողության» շեշտադրելը: Մարդկանց բնորոշ հատկանիշ է «լինել ինչ որ մի մեծ ամբողջության մասը», և դա մարդկանց ներգրավման հզոր գործիք է, հատկապես տեղական կամ տարածաշրջանային նախագծերում: Հայաստանում և այլ երկրներում իրականացված ծրագրերից շատերը ունեն համայնքի նկատմամբ ուժեղ մոտեցումներ, որոնցից մեկը ներկայացվում է ստորև:

▪ ***«Insero Live Lab» նախագիծը՝ մարդկանց ներգրավելը պատմությունների միջոցով***

«Insero Live Lab» նախագիծը կարելի է անվանել կենդանի լաբորատորիա, որում էներգետիկ տեխնոլոգիաները և ծառայությունները ուսումնասիրվում են իրական հաճախորդների՝ շահառուների կողմից: Ծրագիրն իրականացվել է Դանիայի Մենդեդեր գյուղում, որտեղ 20 տնային տնտեսություններ հազեցվել են էներգետիկ և տեղեկատվական ոլորտի նորագույն



Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում Մեթոդական ուղեցույց էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով

տեխնոլոգիաներով: Ծրագրի մոտեցումները կենտրոնանում են իր մասնակիցների հետ համագործակցության և հաղորդակցության վրա, ներառյալ հարցազրույցների, համատեղ ստեղծագործական սեմինարների և մի շարք տեղական միջոցառումների վրա: Ծրագրի աջակցությամբ հաղորդակցման ռազմավարությունը լրացվեց մի սցենարային մոտեցմամբ, որի մասնակիցները նկարագրեցին, թե ինչպես են նրանք առօրյա կյանքում համագործակցում նոր սարքավորումների հետ: Վիդեո գեկույցները հրապարակվել են «Insero Live Lab» կայքում և ծրագրի սոցիալական ցանցերում:

Մասնակից բնակիչների կողմից պատմությունները ներկայացվել են ընտանիքների հետ համակարգված հարցազրույցների ժամանակ, ովքեր կցանկանային կիսել իրենց փորձը հանրության շրջանում: Գյուղում տեղակայված նոր տեխնոլոգիաները բացատրելու փոխարեն, որոնք ներկայացնում են ջերմային պոմպեր, ֆոտոէլեկտրական վահանակներ, էլեկտրամոբիլներ, ընտանիքները բացատրում են իրենց պատմությունը այդ տեխնոլոգիաների կիրառման մասին և պատմում են այն մասին, թե ինչպես են հաղթահարել ի հայտ եկած խնդիրները (օրինակ, տեխնիկական դժվարությունները), որպեսզի առավելագույն ձևով օգտվեն այդ նոր հնարավորություններից և դառնային «էներգետիկ հերոսներ»:

Հարցազրույցները և տեսանյութերը հաջողությամբ իրականացրել են ծրագրի երեք խնդիրների լուծումը.

- Համայնքում, և ավելի լայն առումով, փորձի տարածում և նորագույն տեխնոլոգիաների մարկետինգ,
- այդ տեխնոլոգիաները օգտագործողների ուսուցում,
- ծրագրի մասնակիցների ձեռք բերած փորձի ուսումնասիրություն (ծրագրի արդյունքների ինքնագնահատման համար):

Փոքր պատմությունները, որոնք պատմում են տեղական բնակչությունը (ծրագրի մասնակիցները), շատ ավելի հեշտ է հիշվում մյուս մասնակիցների և այլ հարևանների, ուժեղ արտահայտված «տեղի զգացողություն» ունեցող համագյուղացիների կողմից և ստեղծում են ընդհանուր ծրագրի զգացողություն, որտեղ մարդիկ կիսվում են իրենց հաջողություններով և հիմնախնդիրներով:

«Պատմությունների կիրառման մեթոդը» ցույց է տվել, որ դա շատ լավ գործիք է մասնակիցների ամենօրյա կյանքում փոքր արդյունքների փոխանակման և փոխանցման համար, ինչը, սակայն, կարևոր նշանակություն ունի համայնքում էներգաարդյունավետ սարքավորումների և տեխնոլոգիաների ընդունման գործում:

▪ *Միայն փողով մասնակցություն չի ապահովվի*

Դրամային խրախուսանքները միշտ չէ որ լավագույն լուծումն են մարդկանց ներգրավելու համար, հատկապես երբ խոսքը գնում է երկարաժամկետ փոխգործակցության մասին: Թեև մենք չենք թերագնահատում դրամային խթանների ազդեցությունը, հայտնի է, որ գոյություն ունի դրամային և ոչ դրամային խթանների համադրության բազմաթիվ տարբերակներ:

Խրախուսանքները կարող են օգտագործվել մարդկանց մասնակցությունը ապահովելու համար խթանելով նրանց ներքին կամ արտաքին շահագրգռվածությունը, այսինքն, ինչ-որ բան անելու



**Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում
Մեթոդական ուղեցույց էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով**

ցանկությունը հանուն իրեն կամ հանուն ուրիշների: Սոցիալական գիտությունների հետազոտությունները ցույց են տալիս, որ այն ոչ դրամային խթանները, որոնք գրավիչ են մարդկանց վարքագծի փոփոխման ներքին շարժառիթներով («ես ուզում եմ հետևել սոցիալական չափանիշներին») հատկապես հաջողված են: Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել ոչ դրամային խթանման հինգ տարբեր տեսակներ.

- սեփական եսի դրական կերպար (սեփական երևակայական կերպար),
- ծրագրի նպատակների կամ արդյունքների նվաճման իմաստը,
- սոցիալական հեղինակության ձեռքբերում / ավելացում,
- լինել ինչ որ մեծ ամբողջության մասը / համայնքային դինամիկայի մաս,
- պարզապես զվարճանալու հնարավորություն:

■ ***Ղրամային և ոչ դրամային խթանների ընտրությունը և համադրումը/միավորումը***

Երբ խոսքը գնում է դրամային խթանների կամ դրամային և ոչ դրամային խթանների համադրման մասին, պետք է հաշվի առնել ազդեցություն ունեցող տարբեր գործոններ.

- խթանման համար ինչպիսի՞ բյուջե է հասանելի,
- կարո՞ղ եմ արդյոք ես համագործակցել տարածաշրջանային հաստատությունների հետ, որոնք կաջակցեն խթանման գործում,
- ի՞նչ արժեքի առաջարկություն եմ առաջարկում ծրագրի մասնակիցներին,
- ովքե՞ր են իմ շահառուները (հաճախորդները), ի՞նչն է նրանց մասնակցության շարժառիթները:

Սույն ուղեցույցը ներկայացնում է վերլուծություն (ոչ սպառիչ) տարբեր տեսակի խթանների բնութագրերի տարբերակման և ծրագրերի իրականացման տարբեր փուլերում դրանց կիրառման համար:

■ ***«InovGrid» նաժագիծը՝ կայուն էներգետիկ վարքագծի խթանումը խաղերի և զվարճանքի միջոցով***

Պորտուգալիայի Ալկոչեթե քաղաքի քաղաքապետարանում, «InovGrid» ծրագրի շրջանակներում փորձարկվեց առցանց խաղային հարթակի «Սպառողների խթանումը սոցիալական համեմատությամբ և մրցակցությամբ» և «Ինչպես անձնական նպատակները կարող են մղել վարքային փոփոխությունների» խաղերը: Վիկտորինային ծրագիրը նախատեսված էր քաղաքի ընտանիքների և աշակերտների համար՝ խթանելու իրենց համայնքում մարդկանց ավելի կայուն և արդյունավետ էներգետիկ վարքագիծը: Մասնակիցները կարող էին միավորներ վաստակել երկու եղանակով՝ պատասխանելով վիկտորինային հարցերին և նվազեցնելով իրենց էներգետիկ սպառումը նախկին սպառման համեմատությամբ: Փորձաշրջանի ավարտին առավելագույն միավորներով խաղացողը ստանում էր պարգև՝ նոր էլեկտրոնային հեծանիվ: Վիկտորինային պլատֆորմը գործարկվեց Ալկոչեթե քաղաքի միջնակարգ դպրոցում:

Այս նախաձեռնությունը չափազանց կարևոր է, քանի որ դա մի ծրագիր է, որը նպաստում է քաղաքացիների հմտությունների ձեռքբերմանը, ուսուցմանը, թե ամեն օր ինչպես պետք է կառավարեն էներգիան իրենց տանը: Նախաձեռնությանը ներգրավվել են դպրոցները, քանի որ խաղը հատկապես երիտասարդ սերնդի համար է, բայց կարևոր է նաև մեծահասակների



մասնակցությունը: Էներգաարդյունավետության ոլորտի փորձագետների և պրակտիկ մասնագետների գիտելիքները խաղի ուղեցույցներում համակցվել են համապատասխան գործընկերների իրենց համայնքի մասին գիտելիքներով՝ որպեսզի լրամշակվի եզակի խաղային փորձը կոնկրետ տարածաշրջանի էներգիայի սպառողների համար: Այս նախաձեռնության հաջողությունը ակնհայտ էր և այն ստացավ համայնքի շահագրգիռ կողմերի բազմակողմանի աջակցությունը:

3. ՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակիչները համայնքային զարգացման գործընթացներում և այդ ուղղությամբ նախատեսվող ապագա ծրագրերում գրավում են կենտրոնական տեղ: Այդ գործընթացները և ծրագրերը հաջողված կլինեն միայն այն դեպքում, եթե մենք հաշվի առնենք մարդկանց ցանկությունները, մասնակցության շարժառիթները, խնդիրները: Համայնքային զարգացման գործընթացները իրենցից ներկայացնում են ոչ միայն տնտեսական, այլ, որ ոչ պակաս կարևոր է՝ սոցիալական խնդիր:

Մարդկանց պետք է ներգրավել գրավիչ գործընթացներում, ինչը նրանց հնարավորություն կտա բացահայտել համայնքի զարգացման առավելությունները իրենց սեփական կարիքների բավարարման համար: Անհրաժեշտ է նպատակային խմբերի կարիքների հնարավորինս լավ իմացություն, ստեղծել գրավիչ խթաններ կամ պարզևատրման սխեմաներ, ներգործուն և արդյունավետ շփում ունենալ նրանց հետ:

Նկարագրվող մեթոդական ուղեցույցը պարունակում է ակնարկ, թե ինչ է անհրաժեշտ հաշվի առնել և ինչ ուղղությամբ գնալ: Առաջարկվող գործիքները ներկայացնում են մանրամասն, քայլ առ քայլ գործողություններ, թե ինչպես մարդկանց գրավել դեպի տեղական որոշումների կայացման և զարգացման գործընթացներում:

- ***Ինչպե՞ս աջակցել համայնքին քաղաքացիական ակտիվության բարձրացման և ներգրավման համար***

Անհրաժեշտ է դիտարկել, թե ինչպես համայնքի (կամ դրա կազմի մեջ մտնող բնակավայրի) սոցիալ-տնտեսական զարգացումը (զարգացման ծրագրերի մշակումը, իրականացումը և հետագա օգտագործումը) կարող է համադրվել համայնքի զարգացման այլ նախաձեռնությունների հետ: Անհրաժեշտ է անդրադառնալ ոչ միայն այն հարցին, թե ինչպես կոնկրետ տեղական նախագիծը կարող է նպաստել զարգացած համայնքի ձևավորմանը, այլ նաև այն հարցին, թե ինչպես համայնքի զարգացման ծրագրերը կարող են ազդել մարդկանց ներգրավվածության վրա: Սույն ուղեցույցը հիմնականում նպատակաուղղված է ծրագրերի ղեկավարներին, որոնք կարող են ներկայացնել ինչպես համայնքային ակտիվ խմբեր, հասարակական կառույցներ, այնպես էլ ՏԻՄ կամ այլ հաստատություններ, աջակցելու համայնքային նախագծերի գործընթացներում:

Ուղեցույցը օգտակար կարող է լինել ինչպես այն ծրագրերի համար, որոնք իրականացնում են այդ համայնքային ակտիվ խմբերը, այնպես էլ այն ծրագրերի համար, որոնք իրականացնում են սոցիալ-տնտեսական կոնկրետ ոլորտի ձեռնարկությունները կամ տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինները, ինչպես նաև շահույթ



չհետապնդող կազմակերպությունները, որոնք կողմնորոշված են դեպի համայնքներ:

■ **Ինչի՞ համար է ուղեցույցը**

Մարդիկ սոցիալական էակներ են: Մեզ համար կարևոր ձեռքբերում է ընդհանուր (համայնքային) նպատակների նվաճումը: Օգտագործելով մեր սոցիալական բնույթը, կարելի է հեշտացնել համայնքի ներկայացուցիչների վարքային փոփոխությունները, ակտիվությունն ու մասնակցությունը, որն անհրաժեշտ է զարգացման ծրագրերի հաջող ծավալման համար: Սոցիալական դինամիկան հանդիսանում է առանցքային բաղադրիչ համայնքային նախաձեռնություններում, որոնք վերաբերվում են սոցիալ-տնտեսական զարգացմանը և, սովորաբար, գրավում են տեղական քաղաքական ու հասարակական գործիչների և տեղական ինքնակառավարման մարմինների հետաքրքրությունը: Չնայած փորձնական ծրագրերի ծավալումը հավանական է, որ ավելի հաճախ նախաձեռնվեն համայնքից դուրս գտնվող հասարակական կառույցների կամ պետական հաստատությունների կողմից, շատ դեպքերում այդ ծրագրերում ներգրավված բնակիչների մոտ կարող է առկա լինել տեղի՝ համայնքի և հանրության զգացողությունը:

Օգտագործելով համայնքի այդպիսի սոցիալական դինամիկան, հնարավոր է որպեսզի.

- հավաքագրել մարդկանց զարգացման նախաձեռնություններում,
- ստեղծել երկարաժամկետ պարտավորություններ մասնակիցների մոտ,
- կոչ անել մարդկանց փոխելու իրենց մոտեցումները հանրային գործընթացներում,
- շահագրգռել մարդկանց ավելի ակտիվ մասնակցության, փոփոխելով նրանց դերը՝ պասսիվ բնակիչներից վերածելով որոշում կայացնող մասնակիցների:

■ **Ե՞րբ կիրառել**

Նախ և առաջ անհրաժեշտ է պարզել՝ նախատեսվող նախագիծը արդյոք հանդիսանում է հարմար համայնքի հետ փոխգործակցության համար:

Համայնքի մասնակցության համար պահանջվում են շատ ռեսուրսներ և հմտություններ, այդ պատճառով օգտակար կլինի սկզբից դիտարկել այն հարցը, թե նախաձեռնողները ցանկանում են արդյոք աջակցություն հավաքագրել ծրագրի իրականացման կամ ծավալման համար: Հետևյալ ստուգիչ ցանկը կարող է օգտակար լինել:

- Համայնքի մասնակցության ինչպիսի՞ տեսակ է անհրաժեշտ: Ինչպիսի՞ն են ենթադրվող արդյունքները:
- Այդ տարածաշրջանում ինչ-որ նման բան արվե՞լ է վերջին մի քանի տարիներին: Հնարավո՞ր է դա օգտագործել կամ թարմացնել/հարմարեցնել առկա կարիքներին:
- Ինչ-որ մեկը կամ խմբեր արդեն դիտարկու՞մ են այդ հիմնախնդիրը: Ավելի լավ չե՞ր լինի սեփական նախաձեռնության փոխարեն ներդրում բերել այդ խմբերի աշխատանքներում:
- Ունե՞ք ռեսուրսներ (աշխատանքի ժամանակ, փորձ և դրամական միջոցներ) այդ աշխատանքների իրականացման համար: Անհրաժեշտություն կլինի՞ զնել հատուկ աջակցություն, թե ոչ:



**Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում
Մեթոդական ուղեցույց էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով**

- Իրապես գիտե՞ք ձեր ոլորտը և համայնքը: Բացահայտե՛լ եք տեղական շահագրգիռ կողմերին, որոնք պետք է գործեն արդեն նախաձեռնության սկզբնական փուլում:
- Ինչպե՞ս եք պլանավորում համայնքի հետ շփումները, փոխգործակցությունը: Ինչպե՞ս եք համայնքին իրազեկելու թե ինչ է տեղի ունենում, ինչպե՞ս եք ցուցադրելու, որ նախատեսված արդյունքները ձեռք են բերվել և աշխատանքը փոխել է իրավիճակը:
- ***Տեղի/բնակավայրի գիտակցման, թե՛ շահերի գիտակցման վրա հիմնված համայնք/համակեցություն***

Անհրաժեշտ է հիշել, որ որպես կանոն կարելի է նույնականացնել երկու տեսակի համայնք / համակեցություն.

- ***տեղի համայնքներ (համակեցություններ).*** մարդկանց ցանցեր, որոշակի աշխարհագրական տարածքի սահմաններում, օրինակ. տարածաշրջանի, միավորված բնակավայրերի, առանձին բնակավայրի, կոնկրետ բնակելի շենքի համալիրի և այլն:
- ***շահեր ներկայացնող համայնքներ (համակեցություններ).*** մարդկանց ցանցեր, որոնք ունեն որոշակի համանման փորձ, ժողովրդագրական բնութագիր կամ շահեր:

Քանի որ ներկայումս աշխարհագրական սկզբունքով առանձնացված շրջաններում, ինչպիսին գյուղն է, կամ միավորված բնակավայրերով համայնքը, իրականացվում են որոշակի թվով սոցիալական ոլորտի ծրագրեր, այդ փորձնական հարթակները բացում են հնարավորությունների պատուհան համայնքային մասնակցության/ներգրավման համար: Սակայն, դրանք միշտ չէ որ հիմնված են համայնքի ներքին սոցիալական դինամիկայի և զարգացումների վրա, որը կմիավորեր քաղաքացիներին կամ մարդկանց խմբերին, որպեսզի հանրային մասնակցության պրակտիկայում ձեռք բերվի սոցիալական փոփոխություն: Այդ դեպքերում համայնքի մոտեցումը քիչ է համապատասխանում համայնքային ծրագրերի կարևոր նպատակներից մեկին՝ մարդկանց միավորմանը նշված գաղափարների շուրջ:

Նկարագրվող ուղեցույցը առաջին հերթին օգտագործվում է այն համայնքների համար, որոնք հատուկ հետաքրքրություն ունեն տեղական ռեսուրսների կառավարման նկատմամբ: Դա կարող է լինել տեղական ջրամատակարարման, ջրահեռացման, ռոռգման համակարգերի կառավարումը, էներգամատակարարման կառավարումը և վերականգնվող էներգիայի ինտեգրումը ցանցերում, գյուղական զբոսաշրջության կազմակերպումը և այլն:

- ***Համայնքային/տեղի ուժեղ զգացողության օգտագործման օրինակ (Texel Cloud Power, NL)***
Խելացի համագործակցություն էներգետիկայի ոլորտում

«Texel Cloud Power»-ը լոկալ խելացի ցանցի ծրագիր է հոլանդական Թեսել կղզում: Ծրագիրը ներառում է 300 տնային տնտեսություններ և ուղղված է այն բանին, որ մասնակցություն բերի կղզու էներգամատակարարության ամրապնդման գործում, իսկ դա նշանակում է, որ էներգիայի վերականգնվող աղբյուրների միջոցով, էլեկտրաէներգիայի տեղական պահանջումները բավարարվի տեղական արտադրությամբ, ինչը հանդիսանում է կղզու վարչական կառավարման մարմնի քաղաքական նպատակը 2020 թվականի համար: Այլ խոսքերով, կղզին ձգտում է դառնալ ինքնուրույն: Հաշվի առնելով կղզիաբնակների իրենց տեղի հետ կապված յուրօրինակ աշխարհընկալումը, ծրագիրը չի ձգտել մեծ թափով ծավալել աշխատանքները,




քանի որ դա կարող էր մարդկանց շեղել իրենց առօրյա գործունեությունից: Ծրագրի ղեկավարը կիրառեց հոլանդական մի արտահայտություն, որը բառացիորեն թարգմանվում է հետևյալ կերպ. «գործեք նորմալ, և դուք արդեն կգործեք բավականաչափ տարօրինակ»: Աշխարհագրական սահմանների պատճառով, բոլոր կողմերից շրջապատված լինելով ծովով, այդ մարդկանց մոտ ուժեղ զարգացած է տեղի զգացողությունը, և բնակիչները կիսում են որոշակի լոկալ ինքնության զգացում: Այդ պատճառով, որոշվեց ծրագիրը վերանվանել «*Թեևել իսելացի ու ինքնաբավ*»: Չնայած այն բանին, որ տեղի ուժեղ զգացողությունը կարող է ծառայել որպես ամուր հիմք ծրագրում մարդկանց մասնակցության համար, դա նաև կարող է խոչընդոտ լինել, քանի որ նրանց սպասելիքները մեծ են և նրանցից շատերը ծրագրի անձնակազմին գիտեն անձնապես, այդ պատճառով կղզում վատ կրնկալվեն ծրագրի թույլ տված նույնիսկ փոքր վրիպումները կամ էներգահամակարգի հնարավոր աննշան խափանումները: *Ավելի շատ տեղեկություններ. www.texelenergie.nl/texel-slim-zelfvoorzienend/67/:*

■ **Համայնքի մասնակցությունը ըստ գործընթացի կամ արդյունքի**

Խիստ կանոն է հստակեցնել, ինչու է նախատեսվող ծրագիրը բնութագրվում որպես համայնքային ծրագիր: Արդյոք դա կապված է արդյունքների չափի, թե՞ համայնքի ներգրավվածության գործընթացի հետ:

- Արդյունքի չափման հիմնական պարամետրը վերաբերվում է նախաձեռնության արդյունքների բաշխմանը, որպեսզի համայնքը (սոցիալական և տնտեսական առումով) օգուտներ ստանա: Այսինքն, օգուտները պետք է բաշխվեն համայնքի անդամների միջև, քիչ թե շատ հավասարաչափ:
- Իսկ գործընթացի չափը ենթադրում է, որ նախաձեռնությունը մշակվում և կառավարվում է համայնքի կողմից (այսինքն, համայնքը մասնակցում է նախագծի ստեղծմանը և ծավալմանը կամ ծրագրի բովանդակության ձևավորմանը և ծրագրի առաջընթացին):



Մխենա 1. Համայնքային ծրագրի բնութագիրը ըստ ծրագրի գործընթացի և ծրագրի արդյունքի
(Walker and Devine-Wright, 2008)



- **Ծրագրի տեսակը.** **A-ն** շեշտը դնում է համայնքի ներգրավվածությանը ծրագրի ողջ ընթացքում:
- **Ծրագրի տեսակը.** **B-ն** շեշտը դնում է համայնքի անդամների միջև ծախսերի և արդյունքների արդարացի բաշխմանը:
- **Ծրագրի տեսակը.** **C-ն** ներկայացնում է համայնքային առաջնահերթությունների բավականին «ազատ» որոշման ծրագրեր (այդ նախագծերը ցույց են տալիս գործընթացի կամ արդյունքների համայնքային դինամիկան):

- **Ինչ անել և ինչ չանել**
 - **Ապահովեք ներգրավվածությունը, չարզեցեցե՛ք այն:** Ծրագրի սկզբում, և ոչ թե վերջում, պետք է մտածել համայնքի արդյունավետ ներգրավվածության մասին:
 - **Ստուգեք համայնքի մասնակցության «հոգնածությունը»:** Արդյոք վերջերս և ներկայումս համայնքը զբաղվա՞ծ է այլ կարևոր հարցերով և ծրագրերով:
 - **Ունենալ առաջամարտիկ և նվիրված մասնակիցներ:** Ամենահաջող ռազմավարությունը ներառում է տեղական հաղորդակցության կոնտակտային անձ կամ դեսպան, և նաև ավելի շատ համայնքի անդամներ, ովքեր իրոք հավատում են, որ համայնքը առաջ է ընթանում:
 - **Մասնակցությունը դարձնել նշանակալից:** Հիշեք, որ ցանկացած պլան պետք է բերի գործողությունների: Յուրաքանչյուրին ձանձրալի է դառնում մասնակցությունը, երբ ոչ մի բան իրականում տեղի չի ունենում:
 - **Գնահատեք ձեր նպատակները յուրաքանչյուր փուլում:** Թիրախ նպատակները պետք է հստակ և հասանելի լինեն՝ շարունակեք հարցնել. «սա ա՞յն է, ինչ մենք փորձում ենք իրականացնել»: Եթե ձեր նախագծի ուղղությունը փոխվի, անպայման հստակ բացատրեք բոլորին, թե ինչու:

- **Ի՞նչ է պետք անել պլանավորման փուլում**
 - **Ներգրավեք տեղական հասարակական և ՏԲՄ կառույցներին:** Հատկապես այն տարածքներում, որոնք հիմնականում մեկուսացված են (օրինակ, հեռավոր գյուղական բնակավայրերը, ամառանոցները), տեղական կառույցները հավանաբար կարող են աջակցել նախագծին, որը նպատակ ունի լուծել ընդհանուր համայնքի խնդիրը, հատկապես, եթե այդ կառույցը կայացած է, ինչպես նաև հանդիսանում է վստահելի գործընկեր: Երբ տեղական կառույցը նախաձեռնում և կառավարում է տեղական զարգացման նախագիծը, դա մասնակիցների մոտ շեշտում է տեղի զգացումը և համայնքային զգացումը, որը սովորաբար արդեն իսկ առկա է բավականաչափ մեկուսացված տարածաշրջաններում:
 - **Փնտրեք երրորդ կողմի աջակցություն/ֆինանսավորում:** Քաղաքացիների մասնակցության գործընթացը կարող է հեշտացվել երրորդ կողմի մասնակցությամբ՝ սկսած մասնագիտական և ֆինանսական խորհրդատվության, տեղեկատվական տեխնոլոգիաների լուծումների (կայքեր, բլոգեր, սոցիալական ցանցեր և այլն)



**Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում
Մեթոդական ուղեցույց էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով**

ապահովումը, մինչև հավաքագրման գործընթացների, կոոպերատիվների ապագա անդամների հավաքագրման նպատակով տեղական միջոցառումների կազմակերպումը: Որոշ ֆինանսական կառույցների կողմից հասանելի կլինի համայնքային տարբեր նախաձեռնությունների ֆինանսավորումը: Կան նաև մասնավոր խորհրդատվական ընկերություններ, որոնք մասնագիտացած են համայնքային նախաձեռնությունների ստեղծման և աջակցության ուղղությամբ:

- ***Ներգրավեք մեծ հեղինակություն ունեցող տեղական գործընկերների:*** Ծրագիրը կառավարելու համար կարող է գերադասելի լինել տեղական, շահույթ չհետապնդող կազմակերպությունների ներգրավումը (օրինակ, խորհրդատվական գրասենյակ, տեղական ինքնակառավարման մարմիններ, համայնքային հասարակական կազմակերպություններ և այլն): Նախագծի կառավարման խնդիրները տեղական դերակատարներին հանձնելով, ծրագիրը կարող է գնահատվել որպես ավելի վստահելի: Եվ դա ավելի համոզիչ կերպով կընկալվի որպես աջակցություն տեղական ընդհանուր օգուտների ներդրմանը:
- ***Տեղական համայնքներին ներգրավելը՝ ծրագրին սոցիալական աջակցություն ապահովելու համար, շահառու համայնքի ներգրավման օրինակ (PREMIO, FR)***

PREMIO նախագիծը որոշել էր մշակել ցուցադրական ծրագիր համայնքային մակարդակում, առավելագույն ձևով օգտագործել տեղական բաշխվող էներգաարտադրության պոտենցիալը, պահանջարկի և էներգիայի տեղական պահեստավորման փոխկարգավորումը, որպեսզի մեղմվի էլեկտրացանցի առավելագույն ծանրաբեռնվածությունը և այդ կերպ իրենց ներդրումը բերել կենտրոնական ցանցի կառավարմանը: Ծրագրի նպատակից ելնելով, թիրախային խմբերը պետք է ներառեին սպառողներ, որոնք կգտնվեին իրական հարևանությամբ, և որոնք կհանդիսանային փոքր ու միջին ձեռնարկություններ և տնային տնտեսություններ: Ֆրանսիայի Պրովանս Ալպեր Լազուր ափ շրջանի տեղական համայնքները հրավիրված էին որպես կամավորներ, ցուցադրական նախագծի իրականացման համար: Արդյունքում ընտրվել է Լամբեսկ համայնքը, քանի որ տեղացիները խանդավառությամբ ցույց են տվել իրենց շահագրգռվածությունը նախագծին մասնակցելու համար (օրինակ, ծրագրի աջակցության միջնորդագիր ստորագրելով, կազմակերպված հանդիպման ընթացքում բազմակողմանիորեն ներկայացնելով նախագիծը): Բացի այդ, Լամբեսկի քաղաքապետը բարձր է գնահատել նախագիծը, քանի որ այն համայնքի համար խոստանում էր ավելի կայուն զարգացում:

- ***Ի՞նչ է պետք անել մասնակիցների հավաքագրման փուլում***
- ***Ստեղծեք տեղական գովազդ:*** Առաջին քայլն այն է, որպեսզի բոլորին տեղեկացնել տեղական ՋԼՄ-ներով (օրինակ, տեղական հեռուստատեսություն, տեղական ռադիո և տեղական թերթեր) և հրավիրել նրանց գրանցվելու ծրագրին մասնակցելու համար: Առաջարկվում է կիրառել սոցիալական մարքեթինգի գաղափարները, ինչպիսիք են ծրագրի սոցիալական նորմի սահմանումը (տեղական նպատակին հասնելու



**Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում
Մեթոդական ուղեցույց էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով**

աջակցություն, ցուցադրելով, որ նաև համազուգահեռներն են միանում) և սահմանափակության ստեղծումը (օրինակ, սահմանափակելով մասնակիցների քանակը, ովքեր կարող են մասնակցել նախագծին): Երբ մարդկանց արձագանքները դանդաղում են, կարելի է օգտագործել ավելի ուղղակի հաղորդակցության ուղիներ, կարող են կիրառվել անհատականացված փոստային կապ կամ հեռախոսազանգեր, որպեսզի մարդկանց հրավիրել միանալու նախագծին: Տեղական գործընկերների նախաձեռնած միջոցառումները, դրանցում օգտագործելով բազմաթիվ հաղորդակցման ուղիներ (հասցեագրված տարբեր տեսակի լսարանների), ամենայն հավանականությամբ հաջողություն կունենան ծրագրի շուրջ աղմուկ ստեղծելու գործում: Տեղական յուրօրինակ ինքնության ճանաչումն ու հասկանալը, որը հանդիսանում է տեղական համայնքի բաղադրիչը, ձեր կողմից ծրագրի մասնակիցներին առաջարկվող ծառայությունը դարձնում է ավելի արժեքավոր և որակյալ: Համայնքի վստահելի և հարգված անդամներին ուղղված խնդրանքը, համայնքի շահերը ներկայացնող նախագծին միանալու համար, ամենայն հավանականությամբ գործոն կհանդիսանա, որը կդյուրացնի մասնակիցների, հատկապես, սկզբնական հավաքագրումը:

- ***Տեղական համայնքների հետ կապ հաստատեք մի քանի եղանակով***, որպեսզի տեղեկացնեք և ներգրավեք պոտենցիալ մասնակիցների, օրինակ, ծրագրի մասին հաղորդելը տեղական տոնակատարությունների ընթացքում կամ մշակութային միջոցառումներին, և ծրագրի մասնակիցների հավաքագրման գործընթացում ներգրավելով տեղական քաղաքացիական հասարակության կառույցներին: Համայնքում միջոցառումների կազմակերպումը հանդիսանում է հաջողված միջոց մարդկանց ծանոթացնելու ծրագրի վերաբերյալ համայնքում առկա համընդհանուր մոտեցմանը:
- ***Շրջակայքում աղմուկ ստեղծելը, օրինակ, (Rendement voor Iedereen, NL) 2012 թ.***

2012 թվականի հոկտեմբերին սկսվեց Նիդերլանդների Ամերսֆորթ քաղաքի հարևանությամբ գտնվող Նյուլաունց բնակավայրում «Համայնքային էներգետիկ կոոպերատիվ» ծրագրի համար մասնակիցների հավաքագրումը: Առաջին հերթին շրջակայքում տարածվեց նախագծի մասին գրքույկը: Այս թուղթիկը առանձնանում էր փայլուն գովազդային թերթիկներից նրանով, որ տպագրված էր կանաչ թղթի վրա գորշ տատերով և պարունակում էր ուղղագրական սխալ (որպեսզի գրավի ընթերցողի ուշադրությունը): Վերևում տպագրված էր հարց. «*Ղուք լսե՞լ էք բնակիչների նոր կոլեկտիվի մասին*»: Ծրագրի ղեկավարների խոսքերի համաձայն, հավաքագրման փուլում համայնքի հետ շփումները պետք է վերաբերվեն «քաղաքացիական անհնազանդություն» հասկացությանը՝ հնարավոր մասնակիցների ուշադրությունը գրավելու համար: Նախակրթարանները նույնպես ներգրավված էին ծրագրի մասին տեղեկատվություն տարածելու համար (նպատակ ունենալով ներգրավել ծնողներին՝ ի նպաստ իրենց երեխաների շահերի): Տեղական թերթերով հրապարակվեցին հայտարարություններ, հարևանությամբ տեղադրվեց գովազդային վահանակ՝ լրացուցիչ ուշադրություն գրավելու համար: Եվ միայն այն բանից հետո, երբ մարդիկ տարբեր աղբյուրների միջոցով մի քանի անգամ հանդիպեցին ծրագրի մասին հայտարարություններին և տեղեկատվական նյութերին, տեղի ունեցավ ծրագրի տեղեկատվական միջոցառումը: Շուտով հավաքագրման միջոցառումներն ու բնակիչների հետ շփումները դադարեցվեցին, քանի որ կար ընդամենը 100 ընտանիքի մասնակցության



հնարավորություն, դրա փոխարեն արդեն գրանցվել էին շատ ավելի մեծ թվով ընտանիքներ:

- ***Ի՞նչ է պետք անել իրականացման փուլում***
- ***Կազմակերպեք համայնքային միջոցառումներ կանոնավոր պարբերականությամբ:*** Նման միջոցառումները թույլ են տալիս համայնքի (միավորված համայնքի տարբեր բնակավայրերի) անդամներին հանդիպել միմյանց հետ դեմ առ դեմ և խոսել ծրագրի փորձի մասին, դրանով իսկ ամրապնդելով համայնքի զարգացման սոցիալական դինամիկան՝ ծրագրում մարդկանց ներգրավման փուլից մինչև կատարման փուլ: Այդ գործընթացին օգնում է նաև վիրտուալ ինտերակտիվ հարթակների ստեղծումը: Նման հարթակները պետք է պարունակեն ինչպես մասնավոր հաղորդագրություններ առանձին հաճախորդի (մասնակցի) համար, այնպես էլ մասնագետների աջակցությամբ համայնքային համաժողովներ՝ փորձի փոխանակման և առաջացած հարցերի պարզաբանման համար: Հավաքեք և ներառեք համայնքի անդամների արձագանքները, օրինակ, կապված ծրագրում կիրառված տեխնոլոգիաների շահագործման հետ և/կամ կապված համայնքում հիմնադրված նոր ծառայությունների հետ, որոնք հնարավոր են դարձել այդ տեխնոլոգիաների շնորհիվ:
- ***Կազմակերպեք համայնքային համատեղ ծառայությունների նախաձեռնում:*** Հավաքեք և ներառեք համայնքի անդամների արձագանքները կապված ծրագրում կիրառված տեխնոլոգիաների և դրանց շահագործման հետ և/կամ կապված նոր ծառայությունների հետ, որոնք հնարավոր են դարձել այդ տեխնոլոգիաների շնորհիվ:
- ***Օգտագործեք ծրագրի տեղական դեսպաններ,*** որոնք ներկայացնում են համայնքը: Ծրագրի դեսպանների օգտագործմամբ, նախագծի ղեկավարության և մասնակիցների խմբի միջև հաղորդակցությունը կարող է իրականանալ բազմակողմանիորեն և ոչ թե վերևից ներքև: Բացի բնակիչներին ներկայացնելուց, ծրագրի դեսպանները կարող են կատարել տարբեր դերեր, օրինակ, նրանցից ոմանք կարող են լինել տեխնիկական փորձագետներ, որոնք առաջինը կփորձեն ծրագրի շնորհիվ թողարկվող նոր արտադրանքը կամ ծառայությունը, իսկ մյուսները կարող են պատասխանատու լինել համայնքի ներսում հաղորդակցության համար:
- ***Մտեղծեք համայնքի կատարողական ցուցանիշների (ծրագրի արտադրողականության) տեսանկյունություն,*** նախընտրելի է կենտրոնական վայրում, ինչպիսին են համայնքապետարանը կամ կենտրոնական հրապարակը, կամ վիրտուալ կերպով՝ առցանց հարթակի տրամադրմամբ ծրագրի արտադրողականությունը տեսանելի դարձնելու և բնակիչների իրազեկության կարիքները բավարարելու համար: Հարթակը թույլ է տալիս որպեսզի համայնքի անդամը առցանց կարողանա համեմատել «իր և համայնքի ուրիշ անդամների մասնակցությունը», կրթության բաժնում սովորել ուղեցույցով, համաժողովում կիսվել իր կասկածներով, խնդիրներով, խորհուրդներով և այլն, համացանցում գնահատել այլոց գաղափարները, ինչպես նաև անհատականացված փոխգործակցություն ունենալ փորձագետների հետ, գրույցի ձևաչափով կամ էլեկտրոնային փոստով:



4. ԴՐԱՄԱՅԻՆ ՏԱՐԱՏԵՍԱԿ ԽԹԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույն մեթոդական ուղեցույցը վերաբերվում է նաև դրամական խթանների ընտրությանը, որը հնարավոր է կիրառել տարբեր եղանակներով, այնպես, ինչպես նաև ոչ դրամական խթաններն են: Նկարագրվող դրամական խթանները կոչված են հաճախորդների (ծրագրերի շահառուների) մոտ առաջացնելու շահագրգռվածություն տարբեր էներգետիկ ծրագրերում մասնակցություն ունենալու համար: Ներքևում նկարագրվում են տարբեր տիպի դրամական խթաններ, որոնք կարող են առաջացնել այդ շահագրգռվածությունը և որոնց ընտրությունը կախված է կոնկրետ դեպքերում համապատասխան գործոններից: Դրամական խթանները կարելի է բաժանել ըստ երեք հիմնական դասակարգերի.

- 1) սովորական դրամական պարգևատրում,
- 2) սպառված էլեկտրաէներգիայի հաշիվների վրա զեղչեր՝ խրախուսանքների (բոնուսների) տեսքով,
- 3) պարգևատրում նվերների տեսքով (ապրանք, էներգետիկ սարքավորումներ և այլն):

Այս դասակարգերից յուրաքանչյուրը պարգևատրման իր առաջարկները կարող է տարբեր կերպ մատուցել, առավել ևս որ դրանք հնարավոր է զուգորդել տարբեր ոչ դրամական խթանների հետ:

■ ***Սովորական դրամական պարգևատրումը (կանխիկ պարգևատրում)***

Կանխիկ պարգևատրումը կարող է առաջարկվել գործնականում ծրագրի ծավալման բոլոր փուլերում, էներգետիկ արտադրանքի ներդրման կամ ցուցադրական ծրագրերի ժամանակ և կարող է հետապնդել մի քանի նպատակ: Կանխիկ գումարով պարգևատրումը, չնայած իր ճկունությանը հաճախորդի կողմից անմիջական օգտագործման առումով, չի հանդիսանում առանձնապես հիշվող և արդյունավետ գործիք (հատկապես, երբ գումարը փոքր է, ինչը հաճախ է պատահում՝ կապված բյուջեների սահմանափակումների հետ): Կախված կոնկրետ դեպքերից, երբ տրամադրվում են դրամական պարգևատրումներ, այդ գումարների չափը կարող է տատանվել մեծ ինտերվալով՝ շատ փոքրից – շատ մեծ: Բոլոր դեպքերում, եթե պայմանագրի մաս են կազմում սովորական դրամական պարգևատրումներն, այս գործիքը, որպես խթան, ցուցաբերում է ոչ մեծ ճկունություն:

■ ***Սպառողների օգտագործած էլեկտրաէներգիայի հաշիվների վրա զեղչերի կիրառումը***

Այս պարագայում անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ նոր սակագների սահմանման համար պահանջվում է կարգավորող մարմնի հատուկ թույլտվությունը, եթե գործող օրենսդրությունը ունի նման պահանջներ: Եթե դա այդպես է, ապա կարելի է կիրառել գնագոյացման դինամիկ ռեժիմ, որը չի պահանջում կարգավորող մարմնի թույլտվությունը: Կոնկրետ ռեժիմի համապատասխան էլեկտրաէներգիայի օգտագործման պարագայում չափվում է այդ ռեժիմին սպառողների հարմարվելու (կամ արդյունավետության) աստիճանը: Եթե սպառողներին հաջողվում է իրականացնել այդ ռեժիմների պահպանումը, ապա նրանք ստանում են խրախուսանքներ իրենց ծախսած էլեկտրաէներգիայի հաշիվների վրա՝ զեղչերի տեսքով: Այդ



**Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում
Մեթոդական ուղեցույց էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով**

բռնուսները կարող են հաշվարկվել յուրաքանչյուր ամսվա էլեկտրաէներգիայի ծախսի հաշիվների վրա: Հնարավոր են նաև այլ ժամանակային ինտերվալներ: Սակայն, եթե սպառողը չի իրականացնում ռեժիմի պահպանումը, ապա էլեկտրաէներգիայի հաշվի վրա կարող է ավելանալ հավելավճար: Անհրաժեշտ ռեժիմից շեղվելու պարագայում այդ գոյացող հավելավճարը նույնպես կարող է հաշվարկվել յուրաքանչյուր ամիս կամ այլ պարբերականությամբ:

Ստացված արդյունքը կարող է փոխանցվել կուտակված լրացուցիչ վճարների վրա ծրագրի ավարտին կամ յուրաքանչյուր փուլի ավարտին, որպեսզի ապահովվի սպառողների մասնակցության խթանները ծրագրի ամբողջ ընթացքում: Խթանների կամ պարգևատրումների մշակման գործընթացում պետք է հիմք ընդունել գների ճկունության հաշվարկը:

- 1) Հաճախորդների վարքի վրա ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ դրամական պարգևատրումները նոր սակագնային ծրագրերի ժամանակ:
- 2) Դուք ինչքա՞ն կարող եք առաջարկել, որպեսզի հաճախորդը արձագանքի:

Մրանք այն հիմնական հետազոտական հարցերն են, որոնք անհրաժեշտ է պարզել: Սակագնային ոլորտում իրականացվող ծրագրերի արդյունքների տիպային պարամետրերը վերաբերվում են էներգախնայողությանը կամ ցանցի բեռնվածության փոփոխություններին, իսկ խթանների պարագայում՝ սպառողների կողմից էներգիայի օգտագործման ճկունությանը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ էլեկտրաէներգիայի սակագինը ոչ բոլոր դեպքերում է, որ հանդիսանում է գլխավոր գործոնը սպառողների էներգետիկ վարքի վրա ազդեցություն ունենալու առումով:

Սակագները պետք է լինեն ամբողջովին ճկուն, և իրականացվող ծրագրերը պետք է թույլ տան սպառողներին նախապես տեղեկանալ օրվա ժամերի ընթացքում դրանց փոփոխությունների մասին, հաջորդ օրվա սակագնի մասին և այլն: Այս ոլորտում իրականացված ծրագրերի փորձը ցույց է տալիս, որ եթե էլեկտրաէներգիայի գինը բարձրացել է 100%-ով, ապա մասնակիցները դրան արձագանքում են սպառման ծավալների միջին հաշվով մոտ 10-11% նվազմամբ: Սակայն, պետք է ընդգծել, որ սովորաբար նման ծրագրերի իրականացման պարագայում գների վրա հիմնված խթանները չեն արտացոլում տվյալ շուկայում առկա էլեկտրաէներգիայի իրական գները: Փաստորեն դրամական միջոցների խնայողության պոտենցիալը և էներգիայի սպառման փոփոխությունները, հաշիվների գեղչերի շնորհիվ, իրականության մեջ սահմանափակված են:

Բացի դրանից, որպես դրամական խթան կարող են առաջարկվել գեղչեր, որը կրկնակվի որպես ավելի ընդհանուր պարգևատրում այս նախաձեռնություններում սպառողների մասնակցությունը խթանելու համար: Խրախուսանքները, որպես գեղչեր, սպառած էլեկտրաէներգիայի հաշիվներից պետք է հանել պարբերաբար՝ ամեն ամիս/եռամսյակ/տարի, որպեսզի սպառողները առարկայականորեն գնահատեն իրենց մասնակցությունը ծրագրերում:

- ***Ֆինանսական օգուտներ մասնակցությունից և «խելացի-ցանցային» տեխնոլոգիաներից, առանց գեղչերի տրամադրման կամ այլ դրամական խթանների***

Ոչ բոլոր դրամական խթաններն է անհրաժեշտ տրամադրել կանխիկ ձևով: Ստորև ներկայացվում է, թե ինչպես սպառողները կարող են ստանալ ֆինանսական օգուտներ մասնակցությունից և «խելացի-ցանցային» տեխնոլոգիաներից, առանց գեղչերի տրամադրման



**Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում
Մեթոդական ուղեցույց էներգասարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով**

կամ այլ դրամական խթանների: Այն սպառողներին, ովքեր կհամաձայնեն մասնակցել ծրագրերին կամ նախաձեռնություններին, կառաջարկվի էներգասարդյունավետ ժամանակակից էլեկտրական-կենցաղային կամ էլեկտրականություն արտադրող սարքավորումներ՝ զեղչված գներով: Դա հատկապես օգտակար խթան է այն փորձնական ծրագրերի ընթացքում, երբ սպառողներից պահանջվում է ձեռք բերել կամ վարձակալել նոր սարքավորումներ: Զեղչերը չեն սահմանափակվում իսկալի էներգասարքավորումներով, ինչպիսիք էլեկտրոնային կառավարմամբ լվացքի մեքենաներն են, կամ աման լվացող մեքենաները, այլ դրանք վերաբերվում են նաև ուրիշ կարգերի սարքավորումների՝ սկսած սմարթֆոններից, PV վահանակներից մինչև ջերմային պոմպեր: Բարձր կարգի էլեկտրական սարքավորումների կիրառմամբ ծրագրերի պարագայում, այդ թվում ֆոտոէլեկտրական վահանակների, ջերմային և էլեկտրական կայանների, ջերմային պոմպերի, էլեկտրամոբիլների և այլն, սովորաբար, փորձնական պոտենցիալ սպառողներին առաջարկվում են զեղչեր այդ սարքավորումների գների 50%-ի չափով, մնացած մասը պետք է ներդնեն իրենք՝ մասնակիցները: Համալրելով էներգասարդյունավետ «իսկալի» սարքավորումներով, իրենց սեփական տների, կամ արտադրական օբյեկտների շուկայական գները կբարձրանան, որի արդյունքում մասնակիցների մոտ կառաջանա ծրագրի նկատմամբ «սեփականության զգացողություն», և ծրագրի հաջողությունը նրանք կհամարեն իրենց հաջողությունը: Իրենց ներգրավվածությունը կլինի ֆինանսական և բացահայտ տեսանելի, ի շնորհիվ իրենց «իսկալի էներգետիկ սարքավորումների»՝ կենցաղային կամ էներգասարտադրող սարքերի: Բնակիչ, այդ ձեռքբերված սարքերի գները զգալիորեն ավելին են, քան վերոհիշյալ մաքուր դրամական խթանները: Այդպիսի փորձնական ծրագրերում մասնակցության համար անհրաժեշտ սարքավորումները կարող է տրամադրվել մասնակիցներին նաև որպես նվեր: Մակայն, առկա փորձը ցույց է տվել, որ այդ դեպքում մասնակիցների քանակը կլինի խիստ սահմանափակ, իսկ ծրագրի արդյունքների տեսակետից մասնակցության բարձր մակարդակը շատ կարևոր գործոն է ավելի ներկայացուցչական արդյունքներ գրանցելու համար:

Ծրագրեր իրականացնող կառույցները կարող են հավաքել անհրաժեշտ էներգասարքավորումների «մեկնարկային լրակազմ», որը կտրամադրվի մասնակից սպառողներին, որպես պարզ ծրագրին մասնակցության համար, կամ հավաքել պարզների հավաքածու մասնակից սպառողների համար, որոնք հասել են ծրագրով դրված նպատակին՝ էներգասպառման ուղղությամբ իրենց վարքի փոփոխության առումով: Սմարթֆոնները և պլանշետները, որպես պարզ, բարձր են գնահատվում «իսկալի-ցանցային» ծրագրերի մասնակիցների կողմից: Այդ նվերները միևնույն ժամանակ կծառայեն ծրագրի իրականացմանը, քանի որ դրանք օգտագործվում են վերջնական սպառողների հետ հետադարձ կապի ապահովման նպատակով փոխանակվող տեղեկատվության համար:

Օգտագործվում են նաև էներգետիկ ոլորտից դուրս գտնվող պարզներ և ապրանքներ: Տեղական թատրոն կամ լողավազան այցելության սեզոնային տոմսերը նույնպես հնարավոր տարբերակներ են: Անհրաժեշտ է օգտագործել նաև տվյալ համայնքի կամ տարածաշրջանի հատուկ առանձնահատկությունները: Օրինակ, ձմեռային սպորտաձևերի հնարավորություններ ունեցող տարածաշրջանում գնահատվում է, երբ որպես ծրագրին արդյունավետ մասնակցության պարզ տրամադրվում է համապատասխան սպորտային հանդերձանքներ:


Նվիրատվության հատուկ ձև է վիճակախաղերը: Այն դեպքերում, երբ մասնակից սպառողները հասել են նախապես որոշված նպատակներին, կամ այլ որոշված արդյունքների, նրանք կարող



են մասնակցել վիճակախաղին, որում կարող են շահել արժեքավոր առարկաներ: Այլ տարբերակ է հանդիսանում ոչ թե ուղղակի պարգևատրումը, այլ ասենք ձեռք բերված սարքավորումների ետգնման աջակցությունը՝ այսինքն, ավելի բարձր գեղջերի կիրառումը նախատեսված նպատակներին հասած սպառողների համար: Կամ, եթե ակտիվ մասնակից սպառողները բոնուսների կուտակման շնորհիվ հավաքել են բավականին միավորներ, նրանք կարող են իրենց ցանկացած գնումները կատարել ինտերնետ-խանութներում և այլն:

- **Դրամային խթանով մասնակիցների ներգրավմամբ համայնքային էներգետիկ ծրագրի օրինակ**

50 մասնակիցներ կարող են օգտագործել ավելի կայուն էներգիա և արձագանքել էներգիայի գների տատանմանը: Երբ կա քանու կամ արեգակնային էներգիայի ավելցուկ, մասնակիցների էլեկտրաէներգիա պահեստավորող մարտկոցները կլիցքավորվեն: Երբ ավելի շատ էներգիա է պահեստավորվում, քան տնային տնտեսություններն են օգտագործում, մարտկոցները կսնուցեն ցանցին: Դա կարվի այն ժամերին, երբ էներգիայի գները ամենաբարձրն են (էլեկտրաէներգիայի առավելագույն պահանջարկի ժամերին):



Նկար 1. Ծրագրին մասնակից տան ինտեգրված էներգետիկ համակարգը (աղբյուրը՝ <http://www.cityzen-smartcity.eu/information-meeting-virtual-power-plant-amsterdam-nieuw-west-molen-van-sloten-monday-28-november/>)

Այդպիսով կստեղծվի վիրտուալ էլեկտրակայան: Ծրագրին մասնակցության համար սահմանվել է նախապայման, որ մասնակից տնային տնտեսությունները պետք է ունենան արևային վահանակներ, խելացի հաշվիչ, ինտերնետ-հասանելիություն և մարտկոցների համար բավարար տարածք (141 x 50 x 38 սմ): Մարտկոցները մասնակիցներին կտրամադրվեն ծրագրի կողմից, 2 տարի ժամկետով:



Նկար 2. Վիրտուալ էլեկտրակայան. ծրագրին մասնակից տնային տնտեսությունների մարտկոցների միջոցով ավելցուկային արևային էներգիայի պահեստավորում և վաճառք (աղբյուրը. նույնը)

5. ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Համայնքների էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերը բազմաթիվ հնարավորություններ են առաջարկում սպառողներին և էներգամատակարար ծառայություններին էներգիա խնայելու և ցանցը ավելի արդյունավետ և հուսալի եղանակով շահագործելու համար: Սակայն, օրինակ, «խելացի էլեկտրացանց» ծրագրերի որոշ հատկանիշներ ենթադրում են նաև սպառողների համար որոշ սահմանափակումներ, իհարկե իրենց համաձայնությամբ, ինչպիսին է, օրինակ, լվացքի մեքենայի օգտագործումը մինչև ուշ երեկո հետաձգելը:

Ծրագրի մասնակիցը (խելացի սպառողը) հարցնում է. «Իսկ ի՞նչ կտա դա ինձ»: Դրա պատասխանը՝ դրամն է: Մասնավորապես, այդպիսի ծրագրերին մասնակցելը սպառողների համար բերում է սպառվող էներգիայի դիմաց դրամական ծախսերի հավելյալ խնայողություն: Իսկ այն մարդկանց համար, ովքեր սեփական էներգաարտադրությունն են ստեղծում, այն կարող է նույնիսկ հանգեցնել այն բանին, որը երբեք ձեր մտքով չի անցել՝ էներգամատակարար ընկերությունը կարող է ձեր բանկային հաշվեհամարի վրա գումար ավելացնել:

Օդորակիչները կամ էլեկտրական ջեռուցիչները առավելագույն ծանրաբեռնվածության ժամերին ավելի խնայողական ռեժիմներով գործարկելու ծրագրերից բացի, խելացի ցանցը հնարավորություն կտա սպառողների հետ համագործակցությամբ ավելի բարդ ծրագրերի իրականացում, ինչը հանգեցնում է ձեռնարկատիրական կառույցների և տնային տնտեսությունների համար ավելի մեծ չափով էներգիայի խնայողությունների, չպակասեցնելով սպառողների հարմարավետությունը: Որոշ օրինակներ ներառում են «ժամանակի օգտագործման (գնագոյացման)», «ճշգրիտ չափման» «էլեկտրատրանսպորտային միջոցների փոխհատուցման» և այլ ծրագրեր:



■ **«Ժամանակի օգտագործման» ծրագրեր**

«Խելացի ցանց» ծրագրերի մեջ մարդկանց ներգրավվելու ամենակարևոր ձևերից մեկը «Ժամանակի օգտագործման» ծրագրերին մասնակցելն է, երբ դրանք հասանելի կլինեն Հայաստանում (ներկայումս Հայաստանի էլեկտրաէներգետիկայի շուկան ազատականացման գործընթացի փուլ է մտել, ինչը նշանակում է, որ գործող «սպառողների համար մեկ վաճառող» մոդելից շուկան անցում կկատարի էլեկտրաէներգիայի ազատ առք ու վաճառքի մեխանիզմին, ինչը ենթադրում է նաև «Ժամանակի սակագին» հասկացության ներդրմանը: «Ժամանակի սակագին» նշանակում է սակագնի ժամ առ ժամ անընդմեջ փոփոխություն՝ կախված տվյալ ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի նկատմամբ առաջարկ-պահանջարկ հարաբերակցությունից: Ներկայումս մեր երկրում գործում է միայն ցերեկ-գիշեր տարբերակված սակագինը):

Ի՞նչ է ժամանակի օգտագործման քաղաքականությունը: Օրվա ընթացքում էներգիայի պահանջարկը փոփոխվում է: Դա, սովորաբար, ամենացածրն է գիշերվա ժամերին և ամենաբարձրն է կեսօրից մինչև երեկոյան ժամերին, սակայն, դա կարող է տարբեր լինել կախված եղանակային և այլ պայմաններից: Երբ պահանջարկն ամենաբարձրն է, էլեկտրակայանները և մատակարար ծառայությունները ստիպված են աշխատել այլ ռեժիմով՝ սպառողների կարիքները բավարարելու համար:

Ցանցի առավելագույն ծանրաբեռնվածության ժամանակ էներգետիկ ծառայություններն երբեմն պետք է ավելի քիչ արդյունավետ և ավելի աղտոտող էլեկտրաէներգիայի արտադրության հզորություններ գործարկեն կամ էլեկտրաէներգիա գնեն այլ աղբյուրներից (օրինակ, հարևան երկրներից), ավելի բարձր գներով: Ամենավատ դեպքերում, էներգետիկ ծառայությունները ստիպված են գնալ կանխարգելիչ միջոցառումների՝ վթարներից խուսափելու համար:

«Ժամանակի օգտագործման» դրույքաչափերը խրախուսում են ձեռք օգտագործելու էներգիան այն ժամանակահատվածում, երբ պահանջարկը ցածր է, և այդ էլեկտրաէներգիան մատակարարվում է ավելի ցածր գնով: Ժամանակի մեջ պահանջարկի ավելի հավասարաչափ բաշխվածությունը ապահովում է, որ բոլորի համար հասանելի լինի էլեկտրաէներգիայի կայուն և հուսալի մատակարարում:

Էներգիայի կառավարման տնային համակարգերը կօգնեն առավելագույն ձևով օգտվել «Ժամանակի օգտագործման» ծրագրից: Օգտվելով տնային համակարգչից կամ շարժական բջջային սարքերից, դուք կկարողանաք տեսնել, թե ե՞րբ են գները ամենաբարձրը, ո՞ր տնային էլեկտրասարքերն են ամենաշատ էլեկտրաէներգիա օգտագործում, և նույնիսկ կարող եք զգուշացում ստանալ, երբ էներգիայի գները սկսեն բարձրանալ, այնպես որ կարող եք հեռակա կարգով տեխնիկան անջատել՝ մինչև պահանջարկը նվազի և գները վերադառնան ցածր մակարդակի:

■ **Ճշգրիտ չափումը**

Հայաստանում այն մարդկանց համար, ովքեր ունեն սեփական էներգաարտադրություն, օրինակ, իրենց տան տանիքին տեղադրված արևային ֆոտոէլեկտրական վահանակների միջոցով, ցանցի հետ էլեկտրաէներգիայի փոխանակման հաշվարկը արդեն մատչելի տարբերակ է: Ընդհանուր առմամբ, ճշգրիտ չափումը ենթադրում է այնպիսի հաշվիչի օգտագործում, որը



**Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում
Մեթոդական ուղեցույց էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով**

կարող է գրանցել նաև էլեկտրաէներգիայի հակադարձ հոսքերը դեպի ցանց (որպես վարկ): Որոշ մեխանիկական հաշվիչներ բառացիորեն ետ կ'ստանան, բայց այսօր հիմնականում օգտագործվում են թվային հաշվիչներ՝ ավելի ճշգրիտ հաշվարկի համար:

Այսօր էներգաարտադրող փոքր համակարգ ունեցող մարդկանց մի մասը ավելի շատ էլեկտրականություն վերցնում է ցանցից, քան իրենց կողմից ցանցին հաղորդած էլեկտրաէներգիան: Իսկ մյուս մասը ավելի շատ էլեկտրաէներգիա է հաղորդում ցանցին, քան ստանում է ցանցից, այլ կերպ ասած կուտակում է ցանցին տրվող վարկեր, հետագայում ցանցից ետ ստանալու նպատակով, կամ այդ արտադրած ավելցուկային էներգիայի դիմաց էներգամատակարար ծառայության կողմից դրամական փոխհատուցում ստանալու նպատակով:

Համայնքային «խելացի ցանց» ծրագրերը թույլ կտան կատարել չափման ծրագրերի կատարելագործում: Օրինակ, էներգետիկ ծառայությունը կարող է ավելի շատ վճարել հաճախորդի կողմից ցանցին հաղորդվող էլեկտրաէներգիայի համար օրվա ընթացքում էներգիայի առավելագույն պահանջարկի ժամանակ, և ավելի քիչ գումար վճարել պահանջարկի ոչ առավելագույն ժամանակաշրջանի համար: «Ժամանակի օգտագործման» այդպիսի գնագոյացման մեխանիզմը խրախուսում է էներգաարտադրող տնային տնտեսություններին, նվազագույնի հասցնելու իրենց կողմից էներգիայի օգտագործումը առավելագույն պահանջարկի ժամանակ, որպեսզի նրանք կարողանան առավելագույնի հասցնել ցանցին սնուցող էներգիայի քանակը:

■ ***Այլ ֆինանսական խթաններ***

«Խելացի ցանց» ծրագրերը բազմաթիվ նոր ուղիներ կբացեն մասնակիցների (հաճախորդների) հետ փոխգործակցության համար: Այդ նոր ուղիներից շատերը մասնակիցներին կառաջարկեն էներգախնայողության նոր հնարավորություններ, սակայն դրանցից որոշները կարող են ներառել նաև աննշան անհարմարություններ, ինչպես նաև ֆինանսական խթաններ, որպեսզի խրախուսեն մարդկանց մասնակցությունը:

Օրինակ, կարող է խրախուսվել, որ խելացի կենցաղային տեխնիկական գործարկվի էլեկտրաէներգիայի առավելագույն պահանջարկից դուրս ժամանակահատվածում: Մասնակցի լվացքի մեքենան կարող էր աշխատել ուշ երեկոյան, կամ սառնարանը կարող էր հետաձգել իր սառեցման ցիկլը, իսկ օդորակիչը կարող է մի փոքր ցածրացնել իր ցիկլային պարբերականությունը, որպեսզի օգնի նվազեցնել էներգիայի սպառումը պահանջարկի առավելագույն ժամերին: Այդ ժամանակահատվածում ոչ անհրաժեշտ լույսերը կամ էլեկտրական սարքերը կարող են նույնիսկ անջատվել:

Ցանկացած նման ծրագրի համար էներգետիկ ծառայությունը հավանաբար կառաջարկի որոշակի ֆինանսական խթաններ մարդկանց մասնակցության համար: Արդյունքը կարող է լինել կրկնակի խնայողությունները՝ էլեկտրաէներգիայի ծախսի անմիջական խնայողությունը և հավելյալ օգուտները այդ ծրագրերին մասնակցելու համար՝ նշված ֆինանսական խթաններից օգտվելը:

Պոտենցիալ ֆինանսական խթանների ապագա հատված է ներառում էլեկտրական տրանսպորտային միջոցների օգտագործումը, որոնք շատ երկրներում արդեն տարածում են



Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում Մեթոդական ուղեցույց էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով

գտել: Եթե մասնակիցն ունի էլեկտրամոբիլ, էներգետիկ ծառայությունը կարող է վճարել նրան գումար, խթանելու համար, որպեսզի երբեմն էլեկտրաէներգիա ստանա նրա մեքենայի մարտկոցից: Քանի որ մարտկոցի լրացուցիչ ցիկլը կարող է կրճատել իր պիտանիության ժամանակաշրջանը (առնվազն այսօրվա մարտկոցներում), էներգամատակարար ծառայությունը կարող է մասնակցին լրացուցիչ փոխհատուցում ապահովել, հաշվի առնելով մարտկոցների օգտակար ծառայության ժամանակի փոքր նվազումը:

Ընդհանուր առմամբ, խելացի ցանցը կբացի էներգամատակարար ծառայությունների և նրանց հաճախորդների համար բազմաթիվ նոր հնարավորությունների դուռ՝ էներգիան խնայելու ուղիների վերաբերյալ փոխհամաձայնության հասնելու համար: Ֆինանսական խթանները կարող են ստեղծել նոր հնարավորությունների լայն շրջանակ: Մարդիկ կարող են պատրաստ լինել խելացի սարքեր գնելու համար մի քիչ լրացուցիչ վճարել, օրինակ, եթե այն կարող է նրանց համար նաև եկամտի նոր աղբյուր դառնալ: Խթանները կարող են նաև խրախուսել մարդկանց տեղադրել տնային էներգաարտադրության համակարգեր, ինչպիսիք են փոքր հողմատուրբինները կամ արևային էներգիայի համակարգերը: Դրական արդյունքը երաշխավորված է նրանց համար, նրանց էներգամատակարարի համար և նրանց համայնքի համար:

6. ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Համայնքներում էներգաարդյունավետության ոլորտում իրականացված ծրագրերի փորձը ցույց է տալիս, որ քաղաքացիական մասնակցության խթանման համար անհրաժեշտ է երկարաժամկետ, հետևողական աշխատանք տանել համայնքի հետ և սերտորեն համագործակցել համայնքի (խոշորացված համայնքների պարագայում՝ համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի) բնակչության հետ: Համայնքների ակտիվացման և համայնքային զարգացման նախաձեռնություններում մարդկանց ներգրավման գործընթացներում անհրաժեշտ է առաջնորդվել մի քանի կարևոր սկզբունքներով, մասնավորապես.
 - **Ժամանակ տրամադրել:** Համայնքին ակտիվացնելը և ներգրավելը չենք կարող կազմակերպել, իրականացնել կամ օգտագործել, եթե մենք շտապում ենք: Շտապելով ներգրավման ընդհանուր և առավել տարածված արդյունքը չնչին է: Այն ստիպում է մեզ զգալ, որ պարզապես ժամանակ ենք կորցրել, և համայնքն էլ նույնն է զգալու:
 - **Բացատրել սահմանափակումները:** Չպետք է խոստանանք բաներ, որոնք ծրագրի շրջանակներում չենք կարող ապահովել: Դա կբերի համայնքի ներգրավվածության ընդհանուր ձախողման: Համայնքի համար պետք է հստակ պարզաբանենք, թե որտեղ են ծրագրի իրականանալի սահմանները, թե ովքեր են վերջնական որոշումներ կայացնողները և ինչ ռեսուրսներ են հասանելի:
 - **Համայնքին ակտիվացնելը և ներգրավելը մարաթոն է և ոչ թե սպրինտ:** Փոփոխությունները սովորաբար երկար են տևում: Պետք է պատրաստ լինենք



**Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում
Մեթոդական ուղեցույց էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով**

երկար ճանապարհորդության (երկարատև աշխատանքի) և ժամկետների առումով լինենք իրատեսական:

- **Հաղորդակցվել, շփվել և նորից շփվել:** Անհրաժեշտ է, որ մարդկանց տեղյակ պահենք: Յուրաքանչյուր ներգրավված մասնակից պետք է տեղեկացված լինի իր մասնակցության արդյունքների վերաբերյալ, հատկապես, եթե մենք որոշել ենք ինչ որ բան այլ կերպ անել ծրագրով նախատեսվածի համեմատությամբ:
- **Նշել հաջողությունը:** Պետք է ցույց տանք այն արդյունքը, ինչը ձեռք է բերվել ի օգուտ համայնքի: Դա նպաստում է հանրային սեփականատիրական զգացողության ուժեղացմանը համայնքում և կարող է բարձրացնել մեր հեղինակությունը որպես ծրագրի թիմ կամ որպես հասարակական կառույց:

- Հայաստանում իրականացված ծրագրերի փորձը ցույց է տալիս, որ հատկապես փոքր և լեռնային կամ նախալեռնային բնակավայրերում համայնքային զարգացման ծրագրերը առավել դրական և բազմակողմ ազդեցություններ են ունենում այդ համայնքների վրա: Ծրագրերով իրականացված միջոցառումները դրականորեն են անդրադառնում նաև գյուղերի բնակչության լավատեսական տրամադրությունների և հոգեբանության վրա, այն առումով, որ համայնքի կյանքում որոշակի աշխուժություն է մտնում և հաղթահարվում է հեռավոր և փոքր համայնքներին բնորոշ մոռացված և անտեսված լինելու բարդույթը:
- Հատկապես խոշորացված գյուղական համայնքներում համայնքային զարգացման հասարակական կազմակերպությունների հիմնումը և արդյունավետ գործունեությունը ունի առանձնապես մեծ նշանակություն, քանի որ միավորումից հետո բնակավայրերը չունեն առանձին տեղական ինքնակառավարման մարմիններ և, շատ հաճախ, ներկայացված չեն նաև համայնքի ավագանու կազմում (առավել փոքր բնակավայրերի դեպքում): Համայնքում հիմնված համայնքային հասարակական կազմակերպությունները կարող են հանդես գալ բազմակողմ նախաձեռնություններով՝ ուղղված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը և առկա հիմնախնդիրների լուծմանը: Խոշորացված գյուղական համայնքի պարագայում, ի տարբերություն տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունները կարող են հիմնադրվել և համայնքային գործունեություն ծավալել համայնքի կազմում ընդգրկված յուրաքանչյուր գյուղում, ինչը կնպաստի նաև այդ գյուղերի յուրահատկությունների, այդ թվում մշակութային առանձնահատկությունների պահպանմանը և զարգացմանը:
- Ծրագրերի փորձը ցույց է տալիս, որ համայնքային զարգացման նախաձեռնությունները արդյունավետ կարող են լինել միայն տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցության պայմաններում: ՏԻՄ-երը, բացի այն, որ ծրագրերի իրականացման բոլոր փուլերում ունենում են զգալի մասնակցություն, ներդրումներ և աջակցություն բնակավայրերում իրականացվող ծրագրերում, դրանով նաև մեծ նախադրյալներ է ստեղծվում համայնքում ապագա զարգացման ծրագրերի իրականացման և, ընդհանրապես, դեպի համայնք մեծ ներդրումներ ներգրավելու համար:



- Զարգացման ծրագրերը իրենց բոլոր գործընթացներում պետք է մեծ ուշադրություն դարձնեն համայնքի կանանց և երիտասարդության մասնակցությանը, նրանց կարողությունների և գիտելիքների բարձրացմանը, համայնքի զարգացման նախաձեռնություններում նրանց ներգրավմանը: Դրա շնորհիվ համայնքի քաղաքացիական մասնակցության ավելացումը ստեղծում է անհամեմատ մեծ հնարավորություններ և հեռանկարներ: Կանանց և երիտասարդության մասնակցության շնորհիվ համայնքային համագործակցությունը դառնում է ընդգրկուն, իսկ համայնքային խնդիրների լուծման գործընթացներում համայնքի մոբիլիզացիան՝ իրականանալի:
- Համայնքային զարգացման ծրագրերի շրջանակներում ստեղծված կապերը, համագործակցությունը համայնքների և բնակավայրերի միջև, ինչպես նաև համայնքում և համայնքից դուրս գործող հասարակական և այլ կառույցների միջև, քաղաքացիների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև, համայնքների և համայնքային հասարակական կազմակերպությունների համար ստեղծում են նոր, դեռևս չօգտագործված հնարավորություններ, որոնք կարող են ծառայել համայնքների զարգացման երկարաժամկետ նախաձեռնություններին, դեպի համայնքներ ներդրումների ներգրավմանը, նոր համագործակցության կապերի և ցանցերի ստեղծմանը, երկխոսության մթնոլորտի հաստատմանը, համայնքային խնդիրների լուծման և զարգացման գործընթացներում համայնքի մոբիլիզացմանը և տեղերում առկա մասնագիտական ու այլ ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

7. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Համայնքային մակարդակում էլեկտրաէներգիայի բաշխված արտադրության և մատակարարման մոդելի ներդրման միջոցով սոցիալական, տնտեսական և բնապահպանական օգուտների ստեղծում», «Երրորդ բնություն» հասարակական կազմակերպություն, Գյումրի, 2018թ.
<http://3nature.am/docs/imegdlevel Third Nature NGO Arm.pdf>
2. «Insero Live Lab» նախագիծ. <http://inserolivelab.dk/en/>
3. «InovGrid» նախագիծ. <http://www.s3c-project.eu/News/96/InovGrid.html>
4. «Texel Cloud Power» նախագիծ. <https://www.rvo.nl/subsidies-regelingen/projecten/cloud-power-texel-demonstratie-van-het-cloud-power-concept-de-community-van-texelenergie>
5. Walker and Devine-Wright, 2008
6. Rendement voor Iedereen, NL, 2012
7. «Սարապատ համայնքի իրավիճակային գնահատում և զարգացման հնարավորությունների վերլուծություն»
<http://sarapat.am/Pages/Home/newsdetails.aspx?nID=441#.W38NGNSLSt8>
8. «Խոշորացված համայնքում քաղաքացիական ակտիվության խթանման մեթոդական ուղեցույց», «Բիոսոֆիա» հասարակական կազմակերպություն, Գյումրի 2018թ.
 - <http://www.microgridinstitute.org/>
 - <https://www.fortnightly.com/fortnightly/2013/05/economy-small?authkey=239679983e0ea8e94385574aa531390f6d54ae0111fdb1ef5d698d03495b27d1>



- <https://cleantechnica.com/2016/03/30/anbaric-transmission-microgrid-strategy/>
- <https://www.fortnightly.com/fortnightly/2014/04/community-renaissance?authkey=b9d6692fc797c02b33a55f4293ea1f2b8c65c8286d101f51850fa4e69bcfc485>
- <https://library.ecc-platform.org/news/microgrids-integrated-21st-century-solution>
- www.texelenergie.nl/texel-slim-zelfvoorzienend/67/
- www.smartgrid-engagement-toolkit.eu
- www.s3c-project.eu
- <http://ieeexplore.ieee.org/document/7569501?reload=true>
- <https://interactions.utc.fr/en/thematiques/multi-csale-urban-system-modelling/electric-power-generation-and-local-smart-grids.html>
- www.homerenergy.com
- <http://ieeexplore.ieee.org/document/7569501/>
- [https://www.smartgrid.gov/files/Function Local Controller to Coordinate Distributed Resources 200810.pdf](https://www.smartgrid.gov/files/Function%20Local%20Controller%20to%20Coordinate%20Distributed%20Resources%20200810.pdf)
- <https://energy.gov/oe/activities/technology-development/grid-modernization-and-smart-grid>
- <http://www.myfloridahomeenergy.com/help/library/energy-services/smart-grid/#sthash.6Imp2AjL.aApM2wfA.dpbs>
- <https://bescom.org/en/smart-grid-vision-for-india/>
- <https://www.edsoforsmartgrids.eu/home/why-smart-grids/>
- <https://www.solarpowerworldonline.com/2017/09/virtual-power-plant/>
- <https://www.edsoforsmartgrids.eu/home/why-smart-grids/>
- <https://alfinnextlevel.wordpress.com/2016/06/24/boosting-power-supply-resilience-islanding-via-microgrid/>
- <https://normativenarratives.com/2014/07/28/green-news-the-role-of-microgrids-in-an-all-of-the-above-approach-to-combating-climate-change/>
- <http://www.microgridinstitute.org/community-energy-development.html>
- <http://www.cityzen-smartcity.eu/information-meeting-virtual-power-plant-amsterdam-nieuw-west-molen-van-sloten-monday-28-november/>
- [http://www.smartgrid-engagement-toolkit.eu/fileadmin/s3ctoolkit/user/guidelines/guideline predicting effects of renewable energy integration.pdf](http://www.smartgrid-engagement-toolkit.eu/fileadmin/s3ctoolkit/user/guidelines/guideline_predicting_effects_of_renewable_energy_integration.pdf)
- [http://www.smartgrid-engagement-toolkit.eu/fileadmin/s3ctoolkit/user/guidelines/GUIDELINE USER-CENTRED KPIS FOR THE EVALUATION OF SMART GRIDS.pdf](http://www.smartgrid-engagement-toolkit.eu/fileadmin/s3ctoolkit/user/guidelines/GUIDELINE_USER-CENTRED_KPIS_FOR_THE_EVALUATION_OF_SMART_GRIDS.pdf)
- [http://www.smartgrid-engagement-toolkit.eu/fileadmin/s3ctoolkit/user/guidelines/guideline how to identify regional stakeholders.pdf](http://www.smartgrid-engagement-toolkit.eu/fileadmin/s3ctoolkit/user/guidelines/guideline_how_to_identify_regional_stakeholders.pdf)
- [http://www.smartgrid-engagement-toolkit.eu/fileadmin/s3ctoolkit/user/guidelines/guideline co-creation - collaborating to develop smart energy solutions.pdf](http://www.smartgrid-engagement-toolkit.eu/fileadmin/s3ctoolkit/user/guidelines/guideline_co-creation_collaborating_to_develop_smart_energy_solutions.pdf)
- [https://www.smartgrid.gov/the smart grid/](https://www.smartgrid.gov/the_smart_grid/)
- <https://bescom.org/en/smart-grid-vision-for-india/>



Մարդկանց ներգրավումը համայնքային զարգացման գործընթացներում
Մեթոդական ուղեցույց Էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով

- <http://www.myfloridahomeenergy.com/help/library/energy-services/smart-grid/#sthash.6Imp2AjL.aApM2wfA.dpbs>
 - http://www.smartgrid-engagement-toolkit.eu/fileadmin/s3ctoolkit/user/guidelines/guideline_how_to_gather_community_support_for_your_smart_grid.pdf
 - http://www.smartgrid-engagement-toolkit.eu/fileadmin/s3ctoolkit/user/guidelines/guideline_predicting_effects_of_renewable_energy_integration.pdf
 - <http://www.yerenergo.am/am/23/>
 - <https://www.cooppower.coop/form-cec/>
9. «Ընդունվել է Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման գործընթացին ուղղված օրենսդրական փաթեթը». <http://www.minenergy.am/article/1174>

ՄԱՐԴԿԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ
Մեթոդական ուղեցույց Էներգաարդյունավետության ոլորտի ծրագրերի օրինակով

Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի
Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղ

ԳՅՈՒՄԴԻ, 2018